ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» դեկտեմբերի 2011թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ, ՊՐՈՖԵՍՈՐ ՊԱՎԵԼ ԼԻՍԻՑՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Պավել Լիսիցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մ. Մաշտոցի պողոտա-48 հասցեում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՓՈԽՆԱԽԱԳԱՀ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ, ՊՐՈՖԵՍՈՐ ՊԱՎԵԼ ԼԻՍԻՑՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման համար հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 18-ի N1480-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետությանմշակույթի նախարարի 06.05.2011թ. 01/1.1/1871-11 միջնորդությունը, ինչպես նաև Պավել Լիսիցյանի ներդրած ավանդը Հայաստանի վոկալ երգարվեստում և այն մանկավարժական աշխատանքը, որ արվեստագետը կատարել է 1967-1973թթ. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

1937 թվականից մինչև 1940 թվականը Պավել Լիսիցյանը Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մեներգիչ էր:

1940 թվականին՝ հաջող հյուրախաղերից հետո հրավերք է ստանում տեղափոխվելու Մոսկվա՝ «Մեծ թատրոն»:

Պավել Լիսիցյանը եղել է Մոսկվայի «Մեծ թատրոնի» և ֆիլհարմոնիայի վոկալի գծով մանկավարժ–խորհրդականը, օպերային երգչուհի Իրինա Արխիպովայի ֆոնդի մանկավարժ-խորհրդականը: Վարպետ-դասեր է անցկացրել բազմաթիվ հայտնի երգիչների հետ:

Նա ԽՍՀՄ ժողովրդական արտիստ էր:

Պրոֆեսորի կոչում ստացել է 1970 թվականին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, երբ գլխավորում էր վոկալի ամբիոնը:

Լրացել է Պավել Լիսիցյանի 100-ամյակը:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՓՈԽՆԱԽԱԳԱՀ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ, ՊՐՈՖԵՍՈՐ ՊԱՎԵԼ ԼԻՍԻՑՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Պավել Լիսիցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՓՈԽՆԱԽԱԳԱՀ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ, ՊՐՈՖԵՍՈՐ ՊԱՎԵԼ ԼԻՍԻՑՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Պավել Լիսիցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՓՈԽՆԱԽԱԳԱՀ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ